ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԵՐԿԱՆՅԱՆ. Հայկական մշակույթը 1800—1917 թթ., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1982, 271 էջ։

Հեղինակն անծանոթ չէ ընթերցողին. Վահե Երկանյանն արդեն հայտնի է հայ դպրոցին նվիրված իր մենագրությամբ («Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում. 1870—1905»), առավելապես «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական բազմահատոր հրատարակության VI հատորում տեղ գտած իր ակնարկներով՝ նվիրված հայ մշակույթի պատմության առանձին հատվածներին։

Դրանք բավարար հիմք են, որպեսզի նա բարոյական իրավունքով ձեռք զարկեր հայ մշակույթի պատմության առավել ընդարձակ հատվածի տարեգրությունը լիամիտի ներկայացնելուն։ Սակայն թեման ունի իր յուրահատուկ դժվարությունը. գրեթե առաջին անգամ է փորձ արվում մեկտեղելու հայ մշակույթի պատմությունը՝ նրա անհամեմատ ճոխ ժամանակամիջոցում՝ XIX դ. և մեր դարաշրջանի առաջին քսանամյակում՝ նրա համարյա բոլոր դրսևորումներով։ Նյութի բազմակողմանությունը, փաստերի ցանուցիր լինելը, առհասարակ հայ պատմության երկատվածությունը հետազոտողի վրա կանխապես մեծ պարտք են դնում։ Անհրաժեշտ այդ պարտքը Վահե Երկանյանը ստանձնել է համարձակությամբ ու պատասխանատվությամբ։ Ընթերցողին ներկայացրած աշխատանքը, որ հրատարակվել է գիտահանրամատչելի մատենաշարով, ոչ մեծ՝ շուրջ տասնմեկ հեղինակային մամուլ ծավալով, ցույց է տալիս, որ նա հաղթահարել է թեման՝ բազմերանգ փաստերը մեկտեղելու, սիստեմավորելու, աշխատանքի սահմանները ներելու չափ բնութագրելու իմաստով։ Գործը մենագրական բնույթ չի կրում. այն չի կարելի համարել նաև ուսումնասիրություն։ Երկանյանի աշխատանքը խստորոշ կանոններում ամփոփվող հանրագիտական սկզբունքների ենթարկված խտացումն է այն ուղու, որ անցել է հայ մշակույթը նոր դարաշրջանում՝ նորագույնի պատվանդանին կանգնելու համար։

Եթե այսօրվա մակարդակից պատմաբանի մի հետադարձ հայացք ձգենք հայ մշակույթի բազմադարյան տարեգրության վրա, ապա ակնառու կդառնա, որ 1800—1920 թթ. հարյուր քսան տարվա ժամանակամիջոցը հայ մշակույթի համար լինելության ու երկունքի դարահատված էր՝ ձեռքբերումների և կորստի, արարման և վթարների, բարձունքների և անբերրիության, մտքի ու հոգու բացառիկ պոռթկումների և հարկադիր դադարների ու ակամա արկելակումների պրկված մի շղթա, որ իրար հետ ամրակապում է հնագույն—հինը՝ այսօրվա—նորագույնի հետ։ Ֆրանսիական հայտնի գործչի խոսքերը ժառանգելով, հայ մի հրապարակախոս հարյուր տարի առաջ մեր ժողովրդի անունից իբրև նշանաբան հռչակել է. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ»։ Վ. Երկանյանի գիրքը իր ընդհանուր նպատակամղվածությամբ հաստատում է հայ ժողովրդի դարավոր խորհրդանիշը, որ տվյալ դեպքում կարելի է բանաձևել այսպես. «Ես ստեղծում եմ, ուրեմն և կամ, գոյատևում եմ»։ Եվ դա երևում է գրախոսվող աշխատանքի ամեն մի հատվածից, իրար շաղկապվող փաստերով ու թվարկումներով, համառոտ, բայց և դիպուկ բնութագրումներով։ Հազարավոր փաստերի հանրագումար է գիրքը։ Հենց միայն այդ հեղինակից պահանջել է երկարատև տքնանք։ Առաջին անգամ Վ. Երկանյանի գրքի շնորհիվ ընթերցողը հնարավորություն է ստանում մատչելի ձևով ու բարեխիղճ մեկտեղումով ընդհանուր գաղափար կազմելու քննվող դարաշրջանի հայ մշակութային կենտրոնների ու օջախների, լուսավորության և գրատպության ու մամուլի, գիտության, գրականության ու արվեստի դժվարին ընթացքի, դրսևորումների ու ամրապինդ հիմքի վրա զարգանալու մասին։ Փաստական առումով գրքում հազիվ թե կարելի է արձանագրել որևէ լուրջ վրիպում կամ բացթողում։ Եվ դա հավասարապես վերաբերում է մշակույթի բոլոր բնագավառներին՝ կրթություն—դպրոց, տպագրական գործ—մամուլ, լեզվաբանություն—պատմագիտություն, հնագիտություն—ազգագրություն, գրականագիտություն—փիլիսոփայություն, գրական (նաև աշուղական) ստեղծագործություն—գրողներ, հայագիտություն—գիտնական հայագետներ, թատրոն—երաժշտություն և կերպարվեստ՝ 1800-ից առ 1917-ը։

Ընդհանուր գաղափար տալու խնդիրը գրքում միաժամանակ զուգորդվել է ժողովրդի ստեղծագործող մտքի, այսպես ասած, անհատական դրսևորումները նշելու, հաճախ և արժեքավորելու խնդրի հետ։ Որպես կանոն, Վ. Երկանյանը նշում է տվյալ հեղինակի ու գործչի ծննդյան ու մահվան թվականները, գործունեության շառավիղը, հիմնական ստեղծագործությունն ու ծառայությունը՝ անհրաժեշտ տեղեկություններ, որ հազիվ թե կարելի է մեկտեղված գտնել մի որևէ այլ աշխատանքում։ Ճոխ ու ճաշակով է կատարված գրքի նկարազարդումը (55 նկար)։ Մյուս կողմից, հեղինակը ձգտել է ամեն մի առանձին դեպքում տալ տվյալ մշակութային գործչի ստեղծագործական դիմագիծը՝ նշելով նրա հիմնական գործը, հպանցիկ բնութագրել նրա լուման հայ մշակույթի շտեմարան, երբեմն նաև գործունեության ու ստեղծագործական գաղափարական—ոճական ուղղությունը։ Ինչպես այս, այնպես էլ զուտ փաստական առումով հեղինակն անհրաժեշտաբար դիմել է շատ աղբյուրների և ուսումնասիրությունների։ Մոտ ութ հարյուր անձնանունների ցանկը (ցավոք, տեղանունների ցանկ չի տրված, որ նման ընդգրկման աշխատանքի համար անհրաժեշտություն է) օգնում է ընթերցողին՝ վերադառնալու այս կամ այն հեղինակին ու գործչին նվիրված տողերին։

Հեղինակի կատարած աշխատանքի ծավալի մասին գաղափար տալու համար թերթենք գրքի առավել ընդարձակ հատվածներից մեկը, որ կրում է «Լուսավորություն» խորագիրը (էջ 21—65)։ Կյանքի վերափոխման համար մղված պայքարն իրավացիորեն պայմանավորելով հասարակական-քաղաքական պայմաններով, հեղինակն առաջին պլանի վրա է դրել կրթական-լուսավորական այն երկունքը, որ հիմք է հանդիսացել թե՛ մշակույթի և թե՛ առհասարակ կյանքի առաջընթացի համար։ Խնդիրը, ինչպես ցույց է տալիս հեղինակը, միայն դպրոցների հիմնումը չէր, այլ նաև նոր կրթական-լուսավորական սկզբունքների ներառումն ու արմատավորումը, տարածումն ու զարգացումը՝ միշտ և ամենուր ուշադրության կենտրոնում պահելով այդ գործի աղգային դիմագծի անխառն պահպանումը։

Աշխարհաբարի լինելության ընթացքը, լեզվապայքարը, ժողովրդին հասկանալի և դրական համազգային լեզվի մշակումը ցույց տալով, հեղինակը շեշտում է նաև այն հսկայական դերը, որ ունեցավ գրական լեզուն ժողովրդի լայն զանգվածների կրթության ու լուսավորության գործում։ Առանձին մշակութային գործիչների նշելուց բացի, Վ. Երկանյանը շեշտում է նաև կրթական բազմաթիվ օջախների դերը՝ Մայր Վարժարան, Ներսիսյան վարժարան, Սկլյուտարի ճեմարան, մի շարք դպրոցներ, Լազարյան ուսումնական հաստատություն, Ներսիսյան արդյունաշատ դպրոց և այլն։ Այդ և մի շարք ուրիշ ուսումնական կենտրոններ իրենց արդյունքով ու ավանդներով վարակիչ ներգործություն ունեցան դարի երկրորդ կեսի ուսումնական-կրթական օջախների վրա։ Դպրոցը և ուսուցիչը դարձան ժողովրդի առաջընթացի, հաճախ նաև նրա գոյատևման հիմնական ուժն ու ապավենը։ Նախակրթարաններին փոխարինեցին վարժարանները, իսկ սրանց՝ դպրոցները, տիրացու-վարժապետը դարձավ դասավանդող ուսուցիչ, վերջինս՝ մանկավարժ-դաստիարակ և այդ ընթացքի հետ երևան եկավ նաև մանկավարժությունը՝ հանձին երախտաշատ այն դեմքերի առանց որոնց անհնար է երևակայել հալածված ու ճնշված մի ժողովրդի նույնիսկ գոյությունը։

Հեղինակը չի մոռացել կրթական գործի որևէ նշանավոր դեմք, դպրոց, մասնաճյուղային պարբերական։ Միայն հիշատակված հատվածում Վ. Երկանյանը խոսում կամ նշում է ավելի քան 80 գործչի մասին, սեղմ տողերում տալիս նրանց գործունեությունն այդ ասպարեզում, ինչպես և ընդհանուր շարադրանքով ներկայացնում պատմափաստագրական նյութը։ Առանձին ենթահատված է նվիրված կրթական գործի կազմակերպմանն ու դրվածքին նպաստող միություններին, կազմակերպություններին ու ընկերություններին, որոնք պետականության բացակայության պայմաններում էական դեր են կատարել։ Երկանյանի գնահատությամբ դրանց միջոցով հասարակությանն ուղղություն էր տալիս կրթական գործին, միաժամանակ «մերձենում էր դպրոցին և վարժվում կոլեկտիվ շանքեր կիրառելուն» (էջ 56)։

Հարկ է հատուկ նկատել, որ գրքի հեղինակը խիստ ընտրությամբ է օգտագործել և՛ փաստական նյութը, և՛ մանավանդ թվական տվյալները, որոնք օգնում են ճիշտ պատկերացում կազմելու ժողովրդի գրագիտության և կրթական գործի վիճակի մասին։ Երևանի թեմում, նշում է հեղինակը, 1914 թ. գործում էր 185 դպրոց՝ 14 հազար աշակերտով. այդ նահանգում և Կարսի մարզում գոյություն ուներ 400 դպրոց, ուր սովորում էին 25 հազարից ավելի աշակերտ, բայց միայն 16 հազար հայ։ Դա, սակայն, ինչպես նշվում է, չի նշանակում թե ժողովրդական կրթության գործը ինչ որ չափով բարվոք վիճակում էր. Երևանի նահանգում դարավերջին ժողովրդի

միայն 6,4%-ն էր գրագետ, 1908 թ. դպրոց էր հաճախում դպրոցահասակ երեխաների լոկ 38,4%-ը։

Այսպիսով, դրքի այս հատվածը ամփոփ գաղափար է տալիս լուսավորության ընդհանուր դրվածքի մասին՝ քննվող ժամանակահատվածում։ Նույնը կարելի է ասել «Գրատպությունը և պարբերական մամուլը», «Գիտությունը», «Գրականությունը», «Արվեստը» բաժինների մասին։

Գրքի առանձին հատվածները, իհարկե, կարող էին ավելի ընդարձակ լինել, թերևս հարկ էր այլևայլ փաստեր ևս ներառել՝ հավասարարժեք արդեն նշվածներին։ Մասնավորապես կարելի էր ընդարձակել մշակութային մի շարք դեմքերի (Ֆիզիկա Պողոս, Ան. Փափազյան, Մսերյաններ, Պատկանյաններ, Կ. Փանոսյան, Ս. Լիսիցյան, Աբ. Հովհաննիսյան և ուրիշներ) նվիրված տողերը, ավելին ասել որոշ հեղինակների ու գործիչների (Հ. Մյուհենտիսյան, Տ. Նազարյան, Գ. Ջիլինկիրյան, Հ. Սրվանձյան, Գ. Արծրունի, Ա. Արասխանյան, Օրբելիներ, Մ. Մամուրյան, Ա. Արտիարյան և ուրիշներ) մասին՝ մասնավորապես նկատի ունենալով նրանց հարակից գործունեությունը։ Նույնիսկ հարկ էր ներառել «մոռացվածներ», բայց մշակույթի ասպարեզում երախտիք ունեցող այնպիսի գործիչների, որպիսիքն էին Խ. Պարտիզպանյանը, Կ. Շահնազարյանը, Գ. Այվազովսկին, Ն. Աշտարակեցին, Մ. Աբեղյանը, առավել ևս Աթաբեկյանները, Գր. Տեր-Մելիքսեթեկյանը, Տեռեյանները, Վ. Զարդարյանը և էլի շատերը։ Մշակույթի առանձին ասպարեզների նվիրված հատվածները, ասենք թարգմանական գրականության և հրապարակախոսության բաժինները, հարկ էր անհրաժեշտաբար ավելի լայն ներկայացնել։

Այս բնույթի այլ ցանկություններ ևս կարելի է հայտնել։ Գուցե տեղին կլինի ուշադրություն հրավիրել որոշ ձևակերպումների ճշտման, մի քանի փաստերի վերստին ստուգման վրա։ Բայց դրանցից ավելի ուշում ենք փափագ հայտնել, որ Վ. Երկանյանը շարունակի ուսումնասիրել հայ մշակույթի իր ընտրած դարահատվածի պատմությունը՝ այն ընդարձակելով, խորացնելով ու հարստացնելով նոր փաստերով և էջերով։ Որպես օրինակ կարող ենք նշել Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանը։ Հեղինակը նշում է նրա հիմնվելու տարեթիվը, ականավոր մանկավարժներին, բնութագրում իբրև արևմտահայ ամենանշանավոր և ամենականոնավոր դպրոցի։ Այս դեպքում թերևս դա բավարար է, բայց հետագա ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտաբար երևան կգան այդ վարժարանի ավելի քան 120 տարիների (1799—1922) գործունեության շատ նշանակալի էջերը կամ՝ հարկ կլիներ էջեր նվիրել Զմյունյաց մշակութային ընկերությանը, Վասպուրական թատրոնին, Հայ ընթերցատանը, Սարգիս Վանանդեցուն, Հայրապետ Սավայանյանին և էլի մի շարք գործիչների, հիշատակել նաև գաղթօջախի (ինչու չէ, նաև մյուս բնակավայրերի) բարերարների դերի մասին մշակութային ձեռնարկներում, որ հազիվ թե կարելի է անտեսել։

Մի փափագ ևս. հայ մշակույթի պատմությանը նվիրված հանգամանալի ուսումնասիրության ընթացքում հեղինակը կարծում ենք հատուկ ուշադրություն կդարձնի այն բազմաբնույթ (նաև դասակարգային առումով) պայքարին, որ մշտապես տեղի է ունեցել նաև մշակույթի բնագավառում և որից չի խուսափել որևէ ասպարեզ։ Հեղինակը հիշատակված մենագրությունը և գրախոսվող գործի մի շարք էջեր ցույց են տալիս, որ այդ պայքարի գիտավոր դրսևորումների պատմությունը նա կարող է ներկայացնել ընդհանուր համապատկերում։

Ողջունելով «Հայկական մշակույթը 1800—1917 թթ.» աշխատությունը, ցանկանք, որ Վ. Երկանյանը շարունակի իր շնորհակալ գործը և ավելի լայն ու հանգամանալի ներկայացնի այդ մեծ թեման հայ, ինչպես և ռուս ընթերցողին։

ՄԻՔԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու